ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ (ԶՐԿՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵԿ ՏԱՐՈՎ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ/ԿԱՄ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Մատակարարողի անունը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին

Սկսած այս ծանուցման ամսաթվից հետո քսաներորդ (20) օրացուցային օրվանից՝ դուք <u>այլևս</u> <u>իրավասու</u> չեք լինի IHSS ծրագրից վճարումներ ստանալ ձեր ընթացիկ ստացող(ներ)ին կամ որևէ այլ անձին հաստատված ծառայություններ տրամադրելու համար մեկ տարի ժամկետով:

_____ սպասարկման ամսում դուք գերազանցել եք աշխատանքային
ԱՄԻՍ

շաբաթվա և/կամ ճամփորդության ժամանակի սահմանափակումները՝ անելով

հետևյալից մեկը կամ ավելին.

- ☐ Աշխատել եք 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ այդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:
- ☐ Աշխատել եք ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարել ամսվա ընթացքում, քան սովորաբար կանեիք:
- ☐ Աշխատել եք ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, երբ դուք աշխատում եք մեկից ավել ստացողների համար:
- ☐ Հայցել եք յոթ (7) ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Մեկ տարով իրավասությունից զրկվելու ժամկետը լրանալուց հետո, որպեսզի կրկին իրավասու լինեք IHSS ծրագրի կողմից վճարվել հաստատված ծառայություններ տրամադրելու համար, դուք պետք է կրկին լրացնեք մատակարարողի անդամագրման բոլոր պահանջները, ներառյալ՝ քրեական կենսագրական տվյալների ստուգում, մատակարարողի կողմնորոշում ու այլ պահանջվող ձևերի լրացում:

Եթե համաձայն չեք այս որոշմանը, կարող եք ներկայացնել կցված վարչաշրջանի հայցի ձևը IHSS գրասենյակ վերոնշյալ հասցեով: Դուք ունեք տաս (10) օրացուցային օր այս ծանուցման ամսաթվից հետո, որպեսզի վարչաշրջանից վերանայում խնդրեք: Վարչաշրջանն ունի տաս (10) աշխատանքային օր վերանայելու, հետազոտելու ու որոշում կայացնելու համար: